

Հայոց ցեղասպանության թեման և անցյալի վերհուշը Անրի Վերնոյի «Մայրիկ» վեպում

Գալստյան Նելլի

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2025.2hs-64>

«Հայոց դատը համամարդկային դատ է, և սակայն Եվրոպայի ու աշխարհի ուշադրությունը գրավելու համար բոլոր հայերի ձայները պետք է միանան մեկ ձայնի մեջ: Հայերի փրկության պայմանը միաբան գործունեությունն է»:

Անատոլ Ֆրանս

Հանգուցային բառեր. *անցյալի հիշողություն, անհատականություն, եղեռնապատկեր, ինքնության փնտրտուք, հուշագրություն, ինքնություն, իրողություն, զգացողություն*

Նախաբան

Հայոց ցեղասպանության հարցը միայն հայ ժողովրդի խնդիրը չէ, այլ մի ցավ է, որը կիսում են ամբողջ աշխարհի բարի կամքի մարդիկ՝ անկախ ազգությունից և կրոնից:

«Հայոց ցեղասպանությունը» գրում է ամերիկահայ անգլիագիր գրող Փիթեր Բալթ-յանը,– մարդկության վիթխարի պատմության մի մասն է, ընթերցողը, վաղ թե ուշ, գալիս, մտնում է նրա մեջ ու ընկալում այն: Հայ ժողովրդի 20-րդ դարի պատմությունը, հատկապես այն սոսկալի իրողությունները, որ տեղի ունեցան Օսմանյան Թուրքիայում, ողջ աշխարհին է, բոլորին է հետաքրքրում: Այն կազմում է մարդկության էպիկական պատմության մի էական մասը» [1, 3]: Ցեղասպանության թեմային անդրադարձան թե՛ հայագիր, թե՛ օտարագիր հայ գրողները և աշխարհի շատ ու շատ գրողներ՝ էռնեստ Հեմինգուեյը («Ջոյնտոնիայի ափին» և «Գիլիմանջարոյի ձյունները»), Հենրի Միլլերը («Մարուսիի արձանը»), Ջոն Դոս Պասոսը («Արևելյան ճեպընթաց») և Կուրտ Վոնեգուտը («Կապտամորուքը»), Էլջին Գրոսքլուն («Արարատ»), Էլիա Կազան («Ամերիկա, Ամերիկա») և ուրիշներ:

Անրի Վերնոյն իր «Մայրիկ» (1985) վեպով և բազում հոդվածներով հայ գրչակիցների նման անդրադարձավ Հայոց ցեղասպանության թեմային՝ համաշխարհային հանրությանը մեկ անգամ ևս հիշեցնելով հայ ժողովրդի ռդերգության և վերածննդի մասին:

Ֆրանսագիր հայ գրողն իր երկու՝ ֆրանսիական և հայկական ինքնություններով ու ֆրանսերենով կարողացավ ցույց տալ այդ ցավի գեղարվեստական դրսևորման ուժը:

Հոդվածի նպատակն է 20-րդ դարի հեղինակ Անրի Վերնոյի «Մայրիկ» վեպի ուսումնասիրությամբ բացահայտել և արժևորել ազգային ինքնության թեման՝ իր արտացոլումներով և դրսևորումներով:

Վեպում քննության ենք առել ֆրանսագիր հայ գրողի առջև դրված հիմնախնդիրները՝ աշխարհասփյուռ հայության ազգային ինքնությունն ու ապրելու իրավունքը պահպանելու անխնջ ջանքերն ու մաքառումները:

Ներկա ժամանակներում աշխարհասփյուռ հայության առջև ծառացած նորօրյա մարտահրավերների, լինելության բարդ իրավիճակների պայմաններում թեման ունի արդիական հնչողություն: Շուրջ 40 տարի Անրի Վերնոյի վեպը չի դադարում հիացնել աշխարհի ընթերցասեր հասարակությանը:

Հոդվածի բովանդակությունը

Աշուտ Մալաթյանը հոր խնդրանքով դարձավ լրագրող՝ աշխարհին ներկայացնելու ցեղասպանությունը, իր ժողովրդին բաժին հասած դառը ճակատագիրը: Երկրորդ աշխարհամարտի տարիներին Վերնոյը եղել է «Մարսելյոզ» թերթի լրագրող, հրապարակել հայոց Մեծ

եղեռնին նվիրված հոդվածներ: Եվ որպեսզի իր տեքստերն ու բացահայտումներն իր ազգային պատկանելության հետ կապված միակողմանի չընկալվեին, թերթի խմբագրի խորհրդով հանդես է գալիս Անրի Վերնոյ ծածկանունով: 1950 թվականին սկսված և երեք տասնամյակից ավելի տևած փայլուն կինոկարիերան կարծես թե դուրս է մղում Աշոտ Մալաքյանին: Սկզբում նա մտածում էր. «Դեռ կհասցնեմ վերադառնալ ակունքներին, իսկ առայժմ պետք է նվաճեմ Ֆրանսիան» [3, 3]: 1984-ի աշնանը՝ կարիերայի մայրամուտին, Ֆրանսիան նվաճած, 60-ն անց աշխարհահռչակ կինոռեժիսորը անորոշ մի տազնապով՝ «Բոլոր երեք հանկարծ չհասցնեմ...» [3, 3], որոշում է վերադառնալ ազգային արմատներին: Գրում է «Մայրիկ» վեպը, որը եղեռնը վերապրած, դժվարություններ հաղթահարած, կենսասեր մայրերի մասին է. հայ մայրը միշտ եղել է ազգի գոյապահպանության հիմքը:

Դիպուկ է նկատել գրաքննադատ Ամիր Գահմիան. «Վերնոյի վեպը հայ մոր մասին է: Վերնոյը որդիական հարաբերությունների պրիզմայով է ներկայացվում աքսորի, ինքնության թեմաները: Վեպում կենսաբանական մայրը և հայրենիքը պատկերված են միաձուլյ: Չնայած աքսորի մարտահրավերներին, աշխարհագրական հեռավորությանը, այս երկու մայրական գործոնները մնում են հերոսների ինքնության էական խարիսխները՝ նրանց առաջնորդելով դեպի նոր կյանք, մարդկային նոր փոխհարաբերություններ, օգնում կյանքի ոլորապտույտ բարդ ճանապարհին հաստատական առաջ ընթանալ, չկորցնել մարդկային և ազգային դիմագծերը» [2, 224]:

Երկար տարիներ պահանջվեցին գրողից՝ թղթին հանձնելու վեպը:

«Ես հորս խոստացել էի պատմել մայրիկիս մասին, հասկանում էք ինձ: Գիտե՞ք, թե ինչ բան է հոգու պարտքը», - «Մայրիկ» ֆիլմի նկարահանումների օրերին Անրի Վերնոյը ասել էր Փարիզում գտնվող լրագրող Իոսիֆ Վերդյանին [4, 7]:

Ֆրանսագիր հայ գրողը, «Մայրիկ» վեպը վերջնական տեսքի բերելով, հրատարակել է 1985 թվականին՝ հայոց եղեռնի 70 ամյա տարելիցին. այն թարգմանվել է տասնյակ լեզուներով, հայերեն թարգմանությամբ առաջին անգամ լույս է տեսել 1988-ին ԱՄՆ-ում՝ շալիկին մոր ծնկներին նստած փոքրիկ Աշոտի լուսանկարով, որն անցյալ դարասկզբին հայ փախստականներին տրվող նանսենյան անձնագրի պատկերն է: Անկյունում գրված է. «1924, Աթենք»:

Հայաստանում այն հրատարակվել է 1989 թ.-ին, վերահրատարակվել՝ 2015 թ.-ին, կազմի վրա Արշիլ Գորկու «Նկարիչը և իր մայրը» կտավի էսքիզն է:

««Մայրիկ» վեպը դարձավ եվրոպացի ընթերցողների սիրելի գիրքը, գրքի նախաբանում գրում է հրատարակիչ, քննադատ Ռոբերտ Լաֆֆոնտը՝ կարդալով և լսելով Անրի Վերնոյին, ով պատկերում էր փոքրիկ հայ էմիգրանտի մանկությունը, ընկերական մի մեծ շղթա կազմեց՝ պահանջելով շարունակությունը: 1985 թվականը ոչ թե նրա երեսուներորդ ֆիլմի, այլ առաջին գրքի տարին էր: Մայրիկը մի վեհ սիրո պատմություն է, որը ինքնաբերաբար բխում է ոչինչ չմոռացած սրտից: Երբ կարդում ենք այս հուզիչ պատմության վերջին տողերը, հասկանում ենք, որ կինոռեժիսորը վաղուց իր տեղը գիշել է գրող Անրի Վերնոյին» [5, 3]:

Անրի Վերնոյի վեպը իր ընտանիքի հուզիչ պատմությունն է, որն ամուսնի չի մնացել ցեղասպանությունից, որը ճակատագրի բերումով եկել-ապաստանել է Ֆրանսիայում: Հակառակ անձանության աշխարհի անտարբերության ու սառնության՝ այս հայ ընտանիքը, հավատարիմ մնալով իր ազգային արմատներին ու ավանդույթներին, ապավինել է իր անսահման աշխատասիրությանը և բարությանը, համախմբվածությանն ու միասնականությանը, դրանով իսկ նվաճել վերապրելու իր իրավունքը:

«Սիրո այս դարբնոցում ես սովորեցի իմը համարել այն անձկությունը, որ ունենում էր մյուսը: Ես սովորեցի ցավ զգալ (ֆիզիկական ցավ), ինչ նույն պահին զգում էր մյուսը: Մեր ընտանիքում հինգ հոգի էինք, և ուսյալ բժիշկները երբեք չիմացան, թե մեզ խնամում են շատ

էժան գնով, որովհետև բուժելով մեզնից որևէ մեկին, միանգամից բուժում էին հինգ մարդու, ընդամենը ստանալով մի հոգու վճար» [6, 7]:

Ոչ միայն ընտանիքի անդամներն են իրենց համախմբվածությամբ ու միասնականությամբ օտար երկրում նվաճում իրենց ապրելու իրավունքը, նաև հազարավոր հայեր, որոնք ամեն պատեհ առիթով հավաքվում են, նեցուկ լինում միմյանց, փորձում իրենց վշտին հաղորդակից դարձնել օտարներին: Ամեն տարի ապրիլի 24-ին հավաքվում են՝ հիշելու իրենց զոհված հարազատներին. եթե ազգը չունի հիշողություն, իրավունք չունի ապրելու, կորցրած երկիրը իրենց բողոքի ձայնը բարձրացնելու անարդար աշխարհի դեմ:

«1927 թվականի ապրիլի 27-ն էր: Ես յոթ տարեկան էի: Այդ երեկո մի սրահում, որի բեմը ծածկված էր սև պաստառներով, հավաքվել էին կոտորածներից փրկված մոտ երկու հազար հոգի: Բոլոր այդ հրաշքով փրկվածները խաժողադեմ, վշտոտ զարմացած, ողջ են անացել, երբ ամեն ինչ խնամքով ծրագրված և հիմնավորապես կազմակերպված էր իրենց բնաջնջման համար: Այդ երեկո ես տեսա մարտիրոսների ուրվականներ՝ մտրակված դեմքերով, ժայռերի վրա փշրված երեխաների գանգեր, փորոտիքը թափված մայրերի գողգոթա, անպատվությունից խուսափելու համար մահին հանձնված աղջիկներ, և Եփրատը, որ տանում էր հազարավոր խոշտանգված դիակներ» [6, 47-48]:

Վեպում Վերոյը, դիմելով ինքնակենսագրական ժանրին՝ ջանացել է ամեն ինչ ներկայացնել անմիջական, գեղարվեստական հոգեհարազատության կարգ ու սարքով, ուր հավաստիությունն առաջնային պայման է: Եթե խորությամբ նայում ենք ստեղծագործության ներքին շերտերին, ապա պետք է նկատել, որ մենք գործ ունենք ավելի պատկերների, քան վիպական զարգացումների հաջորդականության հետ, երևի թերևս այստեղ վճռորոշ դեր է կատարում Վերնոյի՝ շարժանկարի բեմադրիչ լինելու հանգամանքը: Մեր առջև, թվում է, ավելի շուտ սցենար է և ոչ ինքնակենսագրական վեպի ժանրին ենթակա երկ: Սա կառուցողական պայմանական յուրահատկություն է, որն անտեսել չի կարելի:

Ծնունդով Աշոտ Մալաթյանը Ռոդոսթոյից էր: Արևմտահայ հեղինակները սիրով էին դիմում հին աշխարհի հիշատակներին, նոր աշխարհի մեջ գաղթահայի դժվարին կյանքի մանրամասներին, բացահայտում այն ճանապարհը, ինչպես է կարողանում հզոր ցնցումներից հետո նոր կեցության մեջ վերագտնել մարդկային բնականոն ընթացքներ, թե ինչպես է երեկվա գաղթահայը վերաճում սփյուռքահայի: Սա է, ըստ էության, ստեղծագործական ատաղձը, որը հմտորեն է մատուցված «Մայրիկ» վեպում:

Հայի «փրկվածության» բարդությի քննությունը հարցի առարկայական կողմն է, մինչդեռ հեղինակը փորձում է գնալ շահնության ճանապարհով՝ երևան հանելով նոր ֆրանսիական միջավայրի մեջ ապրելու բանաձևը, որը նույնքան դժվար է, քանի որ ենթադրում է անծանոթ միջավայրի դիմադրության հաղթահարում՝ նահանջի կամ ազգային ավանդույթների պաշտպանության հարաբերակցության լույսով:

«Անհրաժեշտ է, որ նրանք յուրացնեին իրենցը՝ բնօրինակը, իր մշակույթով, սովորույթներով, կյանքի երևույթները ընկալելու եղանակներով, - գրում է Վերնոյը, - բայց անհրաժեշտ է նաև, որ իրենց ընդունած երկիրը ոտք դնելուն պես յուրացնեն կրկնօրինակը՝ այդ երկրի բարքերն ու լեզուն: Չթուլացող աչալըջությամբ, այնպես, որ բնօրինակի սովորույթները չվիրավորեն նոր միջավայրը, և ոչ էլ այս նորը իր զորեղ ազդեցությամբ ուրացման մեղքի մեջ գցի իրեն: Տարբերությունների այս բախումների մեջ ես երագում էի մտալ աննկատ, բայց որպեսզի ձեռք բերեի Պարոն Անհատ կոչումը, անհրաժեշտ էր ամենայն շտապողականությամբ իմ խոսելաձևը փոխարինել ուրիշով» [6, 35]:

Վերնոյի ներկայացրած ընտանիքի բոլոր հերոսներն էլ Փարիզում ապրում և մաքառում են իբրև հայ. հայրիկը, մայրիկը, երկու մորաքույրերը ավագ սերնդի կերպարներ են, որոնց մեջ ոչինչ չես կարող փոխել, հայությունը սրված նպատակն է. նրանց կարելի է համեմատել շահնության դիմադրական կերպարների հետ. նրանք առանձնապես հայրենասիրա-

կան ցցուն կյանքով չեն ապրում, խրված են առօրյայի մեջ, անհանգիստ են իրենց միակ ընդհանուր զավակի՝ Աշոտի համար:

Եվ եթե կա մեկը, որը հետագայում աշխարհաճանաչողության առումներով լուրջ փոփոխությունների միջով պիտի անցնի, գլխավոր հերոսը՝ Ազատ Զաքարյանը, նույն ինքը Աշոտ Մալաքյանն է: Նա ֆրանսիական միջավայրի մեջ պիտի պատռի հայության իր ամոթխածությունը ու փորձի վեր բարձրանալ աստիճանակարգով, արևոտ տեղ նվաճի: Եթե ծնողները զաղթահալից բարձրանում են սփյուռքահայի մակարդակին ու լուծում իրենց առջև դիմադրական առօրեական խնդիրները, ապա նոր սերնդի կերպարում մենք որսում ենք ընթերցողի աչքից թաքնված երրորդ աստիճանը՝ ֆրանսահայից ֆրանսիացու վերափոխվելու ուղին՝ Աշոտ Մալաքյանից Անրի Վերնոյ ձգվելու ճանապարհը: Բայց սա վիպական գործողություններում այդքան ակներև չէ, թեև Վերնոյը թթև գրչով ցույց է տալիս նաև իրեն 80-ական թթ.-ի առաջին կեսին, երբ շարադրում էր վեպը, երբ մեռնում էր մայրը: Մոր մահով կտրվում է հայկականի հետ իրեն կապող վերջին թելը, թեև կարծես Աշոտը դեմ չէ ծնողներից և մորաքույրերից ժառանգած կեցության, առօրյայի, ազգայինի շատ մասնիկներ իր հետ տանել արդեն գտարյուն ֆրանսիական միջավայր:

«Աստված իմ, որքան ծանր եմ ապրելու Մայրիկիս բացակայությունը. գրելով նրա անունը՝ ես չափում եմ ֆրանսերեն «e» տառի անգորությունը՝ հաղորդելու հայկական շատ հարուստ հնչողության քաղցրությունը: Լեզուները իրենց գեղեցկությունը պահպանում են միմիայն չթարգմանված վիճակում» [6, 7]:

Շեղինակը վեպը խորագրում է «Մայրիկ», այն լրացնում է ընտանեկան վեպերի շարքը: Հարազատ կերպարները մնում են ապրող հիշատակներ ոչ միայն պատանու, այլ նաև ընթերցողի աչքին: Դա վերաբերում է հավասարապես հորը՝ Հակոբին, մորը՝ Արաքսիին, և նրա չամուսնացած երկու մորաքույրերին՝ Աննային և Գայանեին, որոնք լքում են այս աշխարհը՝ դառնության բաժակը մինչև վերջ ըմպած: «Զարմանալի բան է հիշողությունը. տարիներ շարունակ գործում է ուղեղի խորքում և պահպանում է այն, ինչ հաճելի է իրեն: Քնաբեր խաղալիքների փոխարեն, որ հորինել են մեծերը փոքրիկների համար, ես գերադասում էի իմ սուրբ ժամապահների դեմքերը: Մայրիկ, Աննա և Գայանե: Միտք երրորդություն, իմ երեք մայրերը, երեքն էլ շաղախված միևնույն սիրով, իրենց անկողիններում նստած, անքուն, համբերությամբ սպասում էին մինչև իմ քունը տանի: Աստիճանաբար այդ պատկերի ուրվագծերը մեղմացան, հետո անհետացան անուշ մի փափկության մեջ» [6, 32]: Մորաքույրերը դժբախտ են, որովհետև չեն կարողացել կազմել իրենց ընտանիքը, բայց և երջանիկ, քանի որ պահպանում են ազգային ավանդույթը, շնորհալի են, համախմբվել գիտեն:

Վեպում նրանք բացում են կարի արտադրամաս՝ գոյության միջոցները նվազագույնից հասցնելով բավարար կեցության սահմանին: Նրանց բոլորին շաղկապում է ազգային տոհմիկ նվիրաբերումը ընտանեկան տեսլականին: Շոքալության ծայրահեղությունն էլ ազգային նստվածքից է. Աշոտին տալիս են ամենաթանկ դպրոցը Մարսելի մեջ, իսկ հետո նաև նավաշինական ուսումնառության: Հաճախ նրանք գիտակից գոհաբերումների են գնում, ինչպես ասենք Գայանեն, որի ճանապարհին հայտնվում է ամուսնության հեռանկարը, սակայն նա մերժում է՝ հանում ազգային ընտանեկան միասնության: Այս ընտանիքը Մարսելում մեկը մյուսի ետևից հաղթահարում է կեցության դժվարություններ, կրում զրկանքներ, ազգային ենթահողի վրա ապրում վիրավորվածություն, փորձում վերագտնել արժանապատվության ներուժը, և դա հաջողվում է: Առանձնապես տպավորիչ են հացթուփի հետ նրանց առաջին շփումները, իրենց դիմաց մարդն է ֆրանսիացուց առաջ՝ հոգաձու, կարեկից, բոլորովին նման չէ տանտիրուհուն ու նրա ամուսնուն, որոնց համար կենվորները, եթե հայրենագուրվ մարդիկ են, ուրեմն պատրաստ են գողության: Նրանք, անընդհատ կասկածներով լցված, իրար հորդորում են սթափ լինել, բայց ի վերջո պարզվում է. իրական գողը իրենցից էր՝ տանտիրուհու մայրը, որը սովորություն ուներ այգուց գողանալ լուլիկները. չէ՛ որ մեղավոր հայերը կային ու կային:

Աշոտի հասունության ճանապարհին դպրոցական պատկերները նույնպես բացում են հոգեբանությունը և ազգային ինքնության ծալքեր: Սկզբում դպրոցում իրեն ընդունում են վերապահումով՝ որպես երկրորդ տեսակի ոչ ֆրանսիացու: Հեղինակն այս ամենին ավելացնում է նաև ընկերային-տնտեսական գործոններ: Օրինակ՝ դասընկերներից Ալեքսանդրի մայրը հրավիրում է ծնունդի: Հարազատները Աշոտի համար վերջին միջոցներով թանկագին զգեստներ են ձառում, որպեսզի տղան հոգեբանական բարդությունը չպարի, իսկ նվերը տանը պատրաստված փախլավան էր, որը, սակայն, ճաշակում են տան սպասավորները, քանի որ ով գիտի արևելյան փախլավայի համը:

Յուրատեսակ դպրոց էր այս տեսարանը ուսումնական հիշողությունների մեջ, ինչն արագացնում է հայ պատանու հասունացումը: Այս դասի նիշերը նա ստանում է 30 տարի անց, երբ անհոգ մեծացած Ալեքսանդրը դիմում է երբեմնի իր դասընկերոջը՝ երեխային տեղակայություն անձնական խնդրանքով, և մերժում է ստանում:

Հայը հաղթահարում է ֆրանսիական ընկերության մեջ ներխուժելու խոչընդոտները, իսկ իր տեղը չգտած ֆրանսիացին նահանջում է, քանի որ չունի դիմադրական ոգին, որով բարձրանում է Աշոտը: Ֆրանսիայի հայրենիքի գավակ դառնալու ճանապարհը Աշոտը հաղթահարում է ընտանիքից ստացած աջակցության ու զորության, իր արմատների շնորհիվ:

Այդ կենսահաստատ գոյության զգացումը խորությամբ էր պահել մայրիկը, որ գրադարանում «Թշվառների», «Տիկին Բովարիի» և այլ վեպերի հարևանությամբ պահում էր ժամանակի ընթացքում մաշված, կազմը պոկված մի գիրք՝ հայկական քերթության հավաքածուն ծալված էջերով, որոնք ցույց էին տալիս նրա սիրած բանաստեղծությունները: Այստեղ արևանման կարմիրով նշված տողեր կային, որտեղ մայրական բնագողը ապավինում էր հավերժության խորհրդին:

Մենք խաղաղ էինք մեր լեռների պես,

Դուք հողմերի պես խուժեցիք վայրագ:

Մենք ձեր դեմ ելանք մեր լեռների պես,

Դուք հողմերի պես ոռնացիք վայրագ:

Բայց մենք հավերժ ենք մեր լեռների պես,

Դուք հողմերի պես կկորչեք վայրագ [6, 239]:

Այն որդին գտնում է մոր մահվան օրերին՝ մաքառումով ապրած կյանք և ապրած կյանքի մեծության գնահատություն:

Վեպը գրավում է անմիջական հուժկոթով, հայության և ազգային հիշողությունների՝ ֆրանսիական խորքի վրա բախումի տեսողագործական հնարամիտ լուծումներով: Մանկական հիշողությունն ամեհի փոթորիկ է հեղինակի համար, ու նա սպառում է ներքին հոգեաշխարհի թրթռոցները՝ հակադրվելով Մարսել Պրուստի «Բառեր» վեպի գեղարվեստական շերտերի կառույցին: Իրենը, այսինքն՝ իր ապրածը, նույնքան արժանի է գրի հիշատակի:

Աշոտը և իր ընտանիքը հասել են եռացող Մարսել քաղաք՝ հոգեբանական և ֆիզիկական ծանրությունների միջով: Այդ նկարագրի անբաժան տարրերն են տրամվայները, խայտաբղետ ամբոխի ժխորը, շրջիկ վաճառականները, ձիակառքերը, այն ամենը, ինչը առժամանակ թվում էր մի քիչ Արևելք: Իրականում Վերնոյը այդ «Արևելքից» էր շտապում դեպի Փարիզ, դեպի ամբողջովին «սպիտակ Էություն», դեպի Ֆրանսիայի բարձրագույն գազաթները, բայց դա ըստ Էության Արևելքից Արևմուտք քաղաքակրթություններ փոխելու ճանապարհը չէ, որի կեսին նա թողնում է իր հորը, երկու մորաքույրերին. դա Արևելքից հեռանալու այն ճանապարհն էր, որն իրեն դուրս է բերում հայկական ավագանից ստիպադաբար և ենթագիտակցորեն: «Անհայրենիք» պատանի էր Աշոտը, երբ մտավ Մարսելի Պարադի փողոց, որ թարգմանաբար կոչվում էր դրախտ:

Շուտով Վերնոյը Փարիզում նվաճեց իրական բարձունքներ, մտավ իրական դրախտի դարպասներից, հասունացավ նրա տեղը ֆրանսիական շարժանկարի արվեստում, բայց

ինքը մնաց նույն անհայրենիք անձնավորությունը, նաև իր եզակի վեպով՝ հակառակ իր խոր ճանաչողության. սա նույնքան խորն էր իբրև ցավ, որքան իր հարազատների կորուստը:

Վեպում կա խորհրդանշական ևս մի պատկեր. դպրոցում հեղինակն ուներ մի ուսուցիչ Պարոն Սիմոն, որին բոլորը կոչում էին Սյուսյու: Վերջինս չէր կարողանում բացել անձնական պահարանը, փականը տեղի չէր տալիս: Մալաքյան աշակերտը մանրիկ շարժումներով, հմտորեն գտնում է փականի լեզվակը բացելու հնարքը, իսկ ակնարկն ավելի խորքային էր:

Դժվարահաճ Ֆրանսիայի դարպասների բանալին իր ձեռքին է, բայց ինքը դրա փոխարեն կորցրել է հիշողությունների թանկ բեռ-պայուսակը, որ տանում է ծննդավայր: Նշանակում է՝ մարդն ու գրողը կանգնած են նոր հայրենիքի ընտրության առջև. սա նոր կյանք է ֆրանսիական շնչով, բայց ներանձնական հիշատակներով:

Եզրակացություն

Ելնելով ժամանակի մարտահրավերներից, մարդու օտարման խնդրից՝ Անրի Վերնոյը փորձել է պահպանել հայի ազգային ինքնությունը, օտար իրականության մեջ հայի ճակատագրի և կեցության խնդիրները, մշակույթը, ցեղասպանության հարցը՝ տալով դրա պատմաբաղադրական, ազգային և բարոյափոխական գնահատականը, դառնալով ցեղասպանության դատապարտման պահանջատերը՝ փորձելով մարդկությանը հեռու պահել հետագա մարդկային աննախադեպ չարիքից

Ֆրանսահայ գրողը, հարելով տարագիր գրականությանը, իր վեպով ցուց տվեց օտար եզերքներում հայ տարագիրների բարդ ու դժվարին կյանքը, մաքառումներն ու համառ պայքարը, կենսասիրությունը, ապրելու, արարելու անկոտրում ոգին:

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2025.2hs-64>

Գրականություն

1. Բալաքյան Փ., Հիշողություն և տրավմա, «Առավոտ» օրաթերթ, Երևան, 2013, 28 Փետրվար: Էլ. հղում՝ <https://www.aravot.am/2013/02/28/209561/> (մուտք՝ 09. 03. 2025):
2. Gahmia A. Henri Verneuil's Mayrig: From Autobiographical Narrative to Film Adaptation. Journal of Apuleius, Volume 11- Issue 2, 2024.
3. Malakian P. If we face our problems, we will solve them. The Armenian Mirror Spectator, 2022.
4. Վերնոյան Ի., Ակնարկների և հարցազրույցների «Ցպահանջ» ժողովածու, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1990, 226 էջ:
5. Verneuil H. Mayrig, Pari, Paperback, 1985, 278 p.
6. Վերնոյ Ա., Մայրիկ, Երևան, «Խորհրդային գրող» հրատ., 1989, 466 էջ:

Тема геноцида армян и память о прошлом в романе Анри Верной «Мать»

Галстян Нелли

Резюме

Ключевые слова: *память о прошлом, индивидуальность, геноцид, поиск идентичности, мемуары, идентичность, реальность, чувство*

В своем романе «Мать» (1985) Анри Верной обращается к теме Геноцида армян, вновь напоминая мировому сообществу о трагедии и последующем возрождении армянского

народа. Обладая двойной идентичностью – французской и армянской – и свободно владея французским языком, писатель создает художественно выразительное свидетельство коллективной травмы. Цель настоящей статьи – исследовать и проанализировать проблему национальной идентичности, ее отражения и проявления в романе «Мать» армяно-французского писателя XX века Анри Верноя. В центре внимания – ключевые вопросы, с которыми сталкивается автор: непрерывная борьба армянской диаспоры за сохранение собственной идентичности, культурной памяти и права на существование. Актуальность темы усиливается современными глобальными вызовами и социально-политическими кризисами, затрагивающими армянские общины по всему миру. В контексте проблем отчуждения и кризиса личностной и коллективной самоидентификации Анри Верной стремится осмыслить судьбу армянина в чужой культурной и социальной реальности. Роман представляет собой попытку комплексной оценки Геноцида армян – исторической, политической, национальной и морально-психологической. Такая интерпретация превращает художественный текст в этическое требование признания и осуждения геноцида, направленное на предотвращение дальнейших проявлений бесчеловечности. Писатель показывает сложные условия жизни армянской диаспоры, их упорную борьбу за самоидентификацию, жизнелюбие, стойкость и творческую силу духа.

The Theme of the Armenian Genocide and the Memory of the Past in Henri Verneuil's Novel "Mother"

Galstyan Nelli

Summary

Key words: *memory of the past, individuality, genocide, search for identity, memoir, identity, reality, feeling*

In his novel "Mother" (1985), Henri Verneuil addressed the topic of the Armenian Genocide, once again reminding the world community of the tragedy and revival of the Armenian people. Henri Verneuil possessing two identities (a Frenchman and an Armenian) and speaking the French language, was able to show the power of artistic expression of this pain. The purpose of the article is to investigate and evaluate the theme of national identity with its reflections and manifestations through the study of the novel "Mother" by the Armenian-French writer of the 20th century, Henri Verneuil. In the novel, we explore the central issues addressed by the French-Armenian writer Henri Verneuil: the tireless efforts and struggles of the Armenian diaspora to preserve their national identity and their fundamental right to live. Today, in light of the modern challenges and complex circumstances faced by Armenians worldwide, these themes remain highly relevant. Confronting the challenges of his time and the problem of human alienation, Verneuil sought to preserve Armenian national identity, reflect on the fate and existence of Armenians in a foreign reality, and address cultural and genocidal issues. He provided historical, political, national, and moral-psychological assessments, calling for the condemnation of genocide and striving to warn humanity against further unprecedented atrocities.

Ներկայացվել է	30. 03. 2025 թ.
Գրախոսվել է	25. 04. 2025 թ.
Ընդունվել է տպագրության	26. 11. 2025 թ.